ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հոկտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

142
(2992)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՔՐՊԱՐՏԻՉ Է. ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ



Հայ մամուլի օրվա առիթով «Ժողովուրդ» օրաթերթը երեկ հրաշալի նվեր ստացավ. հաղթեցինք դատարանում:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը պարտվեց, քանի որ զրպարտել էր «Ժողովուրդ» օրաթերթին:

Հիմա ամեն ինչի մասին՝ հերթով. 2023 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ ԱԺ ամբիոնից ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը հրապարակավ զրպարտեց մեզ (Տեսանյութը՝ ArmLur.am կայքում):

Այդ հայտարարությունից հետո «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիրը Արթուր Հովհաննիսյանից հրապարակավ բացատրություն պահանջեց, եւ, քանի որ չստացանք պատշաճ բացատրություն եւ փաստեր չներկայացվեցին, մտանք դատարան:

Դատարանի միջոցով պահանջել ենք պարտավորեցնել հրապարակայնորեն՝ ԱԺ ամբիոնից, իսկ անհնարինության դեպքում ArmLur.am լրատվական կայքի միջոցով տեսանկարահանմամբ հերքել արված հայտարարությունը եւ նույն ձեւաչափով ներողություն հայցել «Ժողովուրդ» օրաթերթի ամբողջ խմբագրակազմից: Ի հատուցումն հայցվորին պատճառված ոչ նյութական վնասի՝ բռնագանձել 4 մլն ՀՀ դրամ, ինչպես նաեւ դատական ծախսերը:

Իհարկե, դատավոր Սարգիս Երիցյանը մասամբ է բավարարել մեր պահանջները՝ վճռելով, որ Արթուր Հովհաննիսյանը պարտավոր է զրպարտություն համարվող հայտարարությունը հրապարակայնորեն հերքել Ազգային ժողովի ամբիոնից, անհնարինության դեպքում «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերությանը պատկանող ArmLur.am էլեկտրոնային կայքով հերքումն իրականացնել՝ վճռի օրինական ուժ ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում:

Հերքել հետեւյալ կերպ՝ «07.12.2023 թվականին ՀՀ ազգային ժողովի նիստի ընթացքում ամբիոնից արված հայտարարությունը («...դե մենք գիտենք՝ հրապարակումները Հայաստանում ոնց են ծնվում, օրինակ՝ ինչ-որ մեկը կարող ա «Ժողովուրդ» օրաթերթին փող տա, վատ հոդված պատվիրի ինչ-որ մեկի մասին, որ պախարակի էդ մարդուն, ինչը նորմալ երեւույթ ա «Ժողովուրդ» օրաթերթի համար....») իրականությանը չի համապատասխանում»:

Դատարանը վճռել է նաեւ Արթուր Հովհաննիսյանից հօգուտ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերության բռնագանձել 300 հազար ՀՀ դրամ՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում եւ 29 հազար դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Սակայն մենք բողոքարկելու ենք այս որոշումը, քանի որ Արթուր Հովհաննիսյանը պարտավոր է ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼ ԱԺ ԱՄԲԻՈՆԻՑ եւ փոխհատուցել մեզ հասցված նյութական վնասը, որը գնահատված է 4 մլն ՀՀ դրամ:

Չմոռանանք ասել, որ շնորհակալ ենք «ԷՄ ՔԻ ԷՄ փարթներս» փաստաբանական գրասենյակին՝ ի դեմս ղեկավար Գագիկ Խաչիկյանի՝ մամուլի օրը մեզ համար կարեւոր նվեր մատուցելու համար: Ի գո՛րծ:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Սրբազան շարժումը» առաջիկա օրերին հերթական հավաք-քննարկումն է իրականացնելու: Հոկտեմբերի 9-ին՝ Դատախազության հավաքից հետո, որի ընթացքում «փաթեթներ» հանձնվեցին Գլխավոր դատախազին եւ Նիկոլ Փաշինյանի ու տարբեր պաշտոնյաների նկատմամբ քրգործեր հարուցելու հայտեր ներկայացվեցին, շարժման անդամները պատրաստվում են նոր հավաքի: Թեեւ մեզ հետ զրույցում նշեցին, որ օրը եւ վայրը «գաղտնի» է, դեռ չեն ցանկանում հանրայնացնել, բայց ասացին, որ, հավանաբար, այն կկայանա հենց հաջորդ շաբաթ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հավաքը քննարկման ֆորմատով է լինելու, շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը ներկայացնելու է առաջիկա անելիքները եւ շարժման ծրագրերը, քննարկվելու է նաեւ մեր երկրում ստեղծված իրավիճակը:



ՀՀ Ազգային ժողովում նախօրեին տեղի ունեցած վիճաբանությունը սկանդալային կոռուպցիոն բացահայտում էր մեծ հաշվով: ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը հայտարարեց, որ Հովիկ Աղազարյանի որդու ավտոմեքենաների գործով իրեն 2 անգամ դիմել են: Սա նշանակում է, որ կոռուպցիայի կոնկրետ դրսեւորում է եղել՝ հովանավորչություն: Հիշեցնենք, որ այս տարվա ապրիլին Արարատի քաղաքապետարանը 45 000 դոլարով ծառայողական մեքենա է ձեռք բերել համայնքապետ Ասլան Ավետիսյանի համար: Ըստ Civilnet-ի՝ մեքենայի գնման տեխնիկական բնութագիրը գրվել է այնպես, որ անպայման ձեռք բերվի էլեկտրական Volkswagen ամենագնաց, եւ մատակարարը եղել է նույն Հովիկ Աղազարյանի որդուն պատկանող նորաստեղծ ընկերությունը: Կարգապահ Հովիկ Աղազարյանն ԱԺ-ում իր ագրեսիվ վարքով ավելի վատ դրության մեջ դրեց ինքն իրեն, քանի որ ցույց տվեց, որ քննիչների գործունեությունից ակնհայտորեն նեղսրտած է. բողոքում էր քննիչների վարքից: Աղազարյանը, սակայն, չմանրամասնեց՝ այդ «բանալին պտտեցնող քննիչը» ո՞ւմ է հարցաքննել, ո՞ւմ է ահաբեկել բանալիով, ո՞վ է տուժել քննիչի գործողություններից եւ ամենակարեւորը՝ ինչու մինչ օրս չի բարձրաձայնել այդ մասին: Աղազարյանը չմանրամասնեց նաեւ՝ արդյոք իր որդին է եղել հարցաքննվողը: Հովիկ Աղազարյանի այս եւ շատ այլ հայտարարություններ հակասում են ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության եւ երաշխիքների մասին ՀՀ օրենքին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Գրիգոր Մինասյանին ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնից հրաժարական «ստիպելուց» հետո ՔՊ-ն «կրախի» առաջ է կանգնած. իշխող թիմում թեկնածու չունեն: Միայն հայտնի է, որ նախարար աշխատելու իր համաձայնությունն է տվել ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանը: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հենց ինքը՝ պատգամավորն է հայտնել: Սակայն նախկին պետավտոտեսուչ Արմեն Խաչատրյանը չունի իրավաբանի բարձրագույն կրթություն: Նա 2000 թվականին՝ 27 տարեկանում միայն ավարտել է ՀՀ ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը, ստացել իրավագիտության մասնագետի որակավորում, բայց հավակնում է նեղ մասնագիտական կարողություններ պահանջող նախարարություն ղեկավարել: Հիշեցնենք, որ իշխանությունը պայման ունի գտնել կուսակից, ով կհավակնի այդ պաշտոնին. ընտրյալը պետք է կայացնի իշխանության «սրտի» որոշումները՝ չմտածելով արդարադատության մասին: Իսկ ի՞նչ ունեցվածք ունի ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանը: Համաձայն 2023 թվականի հաշվետու տարվա հայտարարագրի՝ պատգամավոր Արմեն Խաչատրյանը որեւէ անշարժ գույք չի հայտարարագրել: Միայն մեկ տրանսպորտային միջոց՝ Vaz մակնիշի, որը գնել է 2007 թվականին: Պատգամավորի բանկային հաշիվների մնացորդը կազմել է գրեթե 800 հազար դրամ, իսկ հաշվետու տարվա եկամուտը՝ 14 մլն 201 հազար դրամ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ՄՈՍԿՎԱՆ ՉՊԵՏՔ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՈՆ ՏԱՐ», ՄԵԼԻՔՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի ԱԳ նախարար Արման Մելիքյանը մանրամասներ է հայտնել՝ ինչ էր կատարվում Արցախում, արդյոք Արցախում տեղի ունեցած վերջին ընտրությունը ազդեց հայաթափմանը:

Արցախի նախկին արտգործնախարարը նաեւ խոսել է արցախահայերի վերադարձի հավանականության մասին:

-Պարոն Մելիքյան, տեւական ժամանակ է, ինչ Հայաստանի Հանրապետությունն ու Ադրբեջանը խաղաղության պայմանագիր ստորագրելու շուրջ բանակցություններ են վարում, սակայն այդպես էլ մինչ օրս որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել, հակառակ նրան, որ գործընթացը սկսվել է 44-օրյա պատերազմի ավարտին: Ավելին՝ Հայաստանի վարչապետն ասում է. «Ստորագրենք այն կետերը, որոնց շուրջ արդեն համաձայնություն կա», իսկ Ադրբեջանի նախագահ Ալիեւը մի քանի օր առաջ նոր հայտարարությամբ հանդես եկավ՝ նշելով, որ ՀՀ վարչապետի այդ առաջարկն անիրատեսական է եւ պետք է բոլոր կետերը համաձայնեցվեն: Ի՞նչ զարգացումներ են հնարավոր առաջիկայում, որեւէ փաստաթուղթ ստորագրելու նախադրյալներ տեսնո՞ւմ եք:

-«Խաղաղության պայմանագրի» ստորագրման մասին խոսելը, կարծում եմ, վաղ է: Լավագույն դեպքում՝ գուցե կարողանան ստորագրել մի արձանագրություն՝ «Խաղաղության պայմանագիր» ստորագրելու նպատակահարմարության վերաբերյալ: Դա էլ միայն նրա համար, որ արդարացվի գործընթացի առկայությունը, որպեսզի ցույց տան, որ դեռեւս լիարժեք համաձայնություն չկա, սակայն կողմերը նպատակադրված են համաձայնություն ձեռք բերելուն: Մոտակա ժամանակներում դժվար թե խաղաղության պայմանագիր ստորագրվի:

-Գիտենք, որ այս օրերին, գործընթացին զուգահեռ, տարբեր երկրներ, միջազգային դերակատարներ հայտարարում են այն մասին, որ «Խաղաղության պայմանագրում» պետք է տեղ գտնի նաեւ արցախցիների վերադարձի հարցը: Անգամ ամերիկյան կողմն է նման հայտարարություն արել: Իսկ հայկական կողմը հակառակը՝ փակ է համարում վերադարձի թեման: Նիկոլ Փաշինյանը նույնիսկ հայտարարել է, որ անիրատեսական է արդեն արցախցիների վերադարձը Արցախ: Ձեզ համար հասկանալի՞ է, թե ինչու է հայկական կողմը նման դիրքորոշում արտահայտել եւ արդյոք վերադարձի նախադրյալներ տեսնում եք:

-Նախադրյալներ արհրաժեշտ է ստեղծել, ձեւավորել: Այդ ուղղությամբ աշխատանք է պետք տանել: Հայաստանի գործող իշխանությունը այլ դիրքորոշում ունի. նա Արցախը չի համարում ինքնորոշվող միավոր, իսկ արցախահայությանը դիտարկում է որպես վտարանդի եւ փախստական: Ելնելով ՀՀ իշխանության դիրքորոշումից՝ կարելի է ենթադրել, որ Արցախի հայության ճակատագիրը լիովին թողել է Ադրբեջանին, դիտարկում է, որպես Ադրբեջանի ներքին հարց: Ադրբեջանն էլ իր հեթին Արցախի կարգավիճակի հարցը համարում է փակված հարց, իսկ արցախահայության վերադարձը կապում է Ադրբեջանի քաղաքացի դառնալու նախապայմանի հետ, ինչը արցախահայության համար անընդունելի է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ՔՅԱՐԱՄՅԱՆԻ ՊԱՀՎԱԾՔԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՔՆՆԱՐԿԵՆ

ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՔՊ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը լրագրողների հետ զրույցում անդրադարձել է Ազգային ժողովում տեղի ունեցած անախորժությանը:

Հիշեցնենք, որ օրերս ԱԺ լսումների ժամին ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի միջեւ ընդհարում տեղի ունեցավ, նրանք սկսեցին միմյանց վիրավորել ու քաշքշել:

Դիտարկմանը, թե ինչպես է վերաբերվում Արգիշտի Քյարամյանի արձագանքին՝ Անդրանիկ Քոչարյանը պատասխանեց. «Ցանկացած պաշտոնյա պետք է լինի շատ զուսպ, ԱԺ-ն ներկայացուցչական ամենաբարձր մարմինն է, ինչ ասես՝ կարող են խոսել: Դուք ինձ ինչքա՞ն սուր հարցադրումներ եք անում, կամ ընդդիմադիրները... ԱԺ-ն հարցեր բարձրացնելու տեղ է»,-ասաց նա եւ հավելեց. «Աղազարյանը նաեւ տարիքով է մեծ: Աղազարյանն էլ մեզ է առավոտից երեկո միշտ անհարմար վիճակների մեջ դնում, այդպես լիներ՝ պետք է բոլորս դանակն առնեինք ու Աղազարյանի հետեւից ընկնեինք, բայց այդպես չի լինում: Պատգամավորն իր կարծիքն է արտահայտում, բայց երբեք չի կարելի պատգամավորին ենթարկել ճնշման՝ իր տղայի հետ կապված քրեական հոդվածների լեզվով: Ինձ համար դա ընդունելի չէ: Պառլամենտն է մեր երկրի կայունություն ապահովողը»:

Նա նկատեց, որ խմբակցությունում այս հարցով քննարկում չի եղել, բայց այս հարցերին անպայման անդրադարձ կլինի:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՉԻ ՎԵՐԱՑԵԼ

2018 թվականի նոյեմբերի 19-ին՝ Մարտունու 190-ամյակին նվիրված միջոցառումների ընթացքում ունեցած ելույթի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Հեղափոխությունը կազմակերպող քաղաքական թիմը կատարել է ժողովրդի առաջ ստանձնած իր բոլոր պարտավորությունները: Մենք ասում էինք՝ ձեր կամքը արտահայտեք փողոցներում եւ հրապարակներում, եւ մենք այդ կամքը կդարձնենք իրականություն: Եվ մենք դա արեցինք: Հաջորդը՝ ասացինք, որ անզիջում պայքար կմղենք կոռուպցիայի դեմ: Այսօր այդ պարտավորությունը լիարժեք կատարված է: Մենք ասում էինք, որ կհասնենք արտահերթ խորհրդարանական ընտրությունների: Մենք հոկտեմբերի 2-ին, 40-50 հազար մարդու օգնությամբ հասանք դրան: Հետեւաբար, բոլոր խոստումները, որ տվել ենք հեղափոխական այս փուլի համար, բոլորը կատարված են:

Իրականում, սակայն, Նիկոլ Փաշինյանը այստեղ եւս պարզապես ստում է: Նա մինչեւ 2018 թվականին վարչապետ ընտրվելը տվել է հարյուրավոր խոստումներ, մինչդեռ ընդամենը 3-ի մասին է նշել: Ընդ որում, դրանցից կատարվել է ընդամենը 1-ը՝ հեղափոխությունը: Արտահերթ ընտրությունների խոստումը ֆորմալ կարելի է համարել կատարված, բովանդակության իմաստով՝ ոչ, քանի որ 21.04.2018թ. խոստանում էր, որ արտահերթ ընտրություններից առաջ կփոխվի Ընտրական օրենսգիրքը եւ կուսակցությունների մասին օրենքը: Այնինչ ոչ մեկն էլ չփոխվեց: Կոռուպցիայի դեմ անզիջում պայքարի խոստումը եւս տապալվել է. ոչ մի կոռուպցիոներ պատժված չէ, թալանը ժողովրդին չի վերադարձվել: Այն, որ իշխանության անդամների հարազատները նշանակվում են պաշտոնների, պետական գնումները տեղի են ունենում իշխանության անդամներին փոխկապակցված կամ նրանց հարազատների ընկերություններից, իշխանության ներկայացուցիչները արագ հարստանում են, հենց կոռուպցիա է այս իշխանության օրոք, որը զարգանում է մեծ տեմպերով: Ալեն Սիմոնյանի, Արմեն Փամբուխչյանի, Սուրեն Պապիկյանի եւ մյուսների ունեցվածքի շեշտակի աճը՝ վառ վկայություն է:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ «ՌԱԶԲՈՐԿԱՆԵՐ» ԵՆ

Հայաստանում հանցավորության իրավիճակի վերաբերյալ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի նախաձեռնած լսումները վերածվեցին իսկական «տղայական խոսակցության»:

Բայց, արի ու տես, որ այս անգամ իրար լեզու չէին հասկանում ոչ թե ընդդիմությունն ու իշխանությունը, այլ վեճ էր ընկել Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի եւ ՔՊ խմբակցության պատգամավորների միջեւ:

Վիճաբանությունը սկսվեց այն բանից, որ ԱԺ ամբիոնից պատգամավոր Հովիկ Աղազարյանը մեղադրեց Քյարամյանին, որ Հայաստանում կալանքը որպես ճնշման միջոց է կիրառվում եւ պնդեց, որ իր նկատմամբ նույնպես ճնշումներ են գործադրվել:

ՔՊ-ականներին բարկացրեց հատկապես այն, որ ՔԿ նախագահը բացահայտումներ արեց իշխանականների ապօրինությունների վերաբերյալ: Մասնավորապես, Արգիշտի Քյարամյանը պարզաբանում պահանջեց՝ ինչու են Հովիկ Աղազարյանի որդու քրեական գործի հետ կապված իրեն զանգել:

Հովիկ Աղազարյանի եւ ՔԿ ղեկավարի այս վեճը վերածվեց փոխադարձ հայհոյանքների, հրմշտոցի:

Լսումները նախագահող Անդրանիկ Քոչարյանը, իրավիճակը հանդարտեցնելու փոխարեն, ավելի շիկացնում էր այն՝ պարբերաբար ընդհատելով Քյարամյանին եւ թույլ չտալով խոսել:

Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել է նաեւ, որ ԱԺ-ում այս միջադեպից հետո Անդրանիկ Քոչարյանի ձեռամբ ՔՊ-ում Արգիշտի Քյարամյանին պաշտոնանկության պահանջով ստորագրահավաք են սկսելու:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿԱԽՎԱԾ Է ԿՈՂՄԵՐԻՑ

ԱՄՆ-ն երբեք ՀՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ հնարավոր խաղաղ համաձայնագիրը չի կապել COP29-ի հետ: Այս մասին ճեպազրույցում ասել է Պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Մեթյու Միլլերը:

«Մի քանի ամիս առաջ մենք ցանկանում էինք տեսնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագիրը եւ պնդում էինք, որ այն ձեռք բերվի: Այնուամենայնիվ, դա կախված է կողմերից, ոչ թե Միացյալ Նահանգներից»,- ասել է նա:

ՖՐԱՆՍԻԱՆ ՄՏԱՀՈԳՎԱԾ Է

Ֆրանսիայի ԱԳՆ-ն մտահոգություն է հայտնել Թայվանի տարածքում Չինաստանի ծովային զորավարժությունների կապակցությամբ՝ կոչ անելով խուսափել տարածաշրջանում էսկալացիայից:

«Մենք մտահոգությամբ հետեւում ենք ՉԺՀ-ի զորավարժություններին Թայվանի շուրջ: Ֆրանսիան վերահաստատում է իր հանձնառությունը նեղուցում խաղաղության եւ կայունության պահպանմանը, որոնք էական են գլոբալ անվտանգության եւ բարգավաճման համար, եւ դեմ է ստատուս քվոյի ցանկացած միակողմանի փոփոխությանը ուժի կամ հարկադրանքի միջոցով: Թայվանի նեղուցում պետք է խուսափել էսկալացիայից»,- ասված է հաղորդագրության մեջ:

PLA զորավարժությունները տեղի ունեցան հոկտեմբերի 14-ին՝ դառնալով Պեկինի պատասխանը Թայվանի վարչակազմի ղեկավար Լայ Ցինդեի՝ հոկտեմբերի 10-ի ելույթի: Նա ասել էր, որ կղզին կպաշտպանի իր «ազգային ինքնիշխանությունը»: Ի պատասխան՝ Չինաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մաո Նինգը հիշեցրել է, որ Թայվանը Չինաստանի մաս է, կղզին ինքնիշխան պետություն չի եղել եւ երբեք չի դառնա:

ԿՈՆԳՐԵՍԸ ՄԵՂԱԴՐԵԼ Է ԲԱՅԴԵՆԻՆ

«Աշխարհը երրորդ համաշխարհային պատերազմի շեմին է՝ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի վարչակազմի թուլության պատճառով, որի քաղաքականությունը նպաստեց գլոբալ լարվածության աճին», - ասել է Ներկայացուցիչների պալատի Ջինված ծառայությունների հանձնաժողովի անդամ Մայքլ Ուոլցը:

Երեքշաբթի օրը, ելույթ ունենալով CNN-ի եթերում, հանրապետական օրենսդիրը մատնանշել է, որ Եվրոպայում եւ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձություններն աշխարհը հասցրել են Երրորդ համաշխարհային պատերազմի շեմին, որը տեղի է ունեցել վերջին չորս տարիների ընթացքում՝ «Բայդենի հսկողության ներքո»:

ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է ԹՌԻՉՔՆԵՐԸ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ

«Iran Air»-ը՝ միակ իրանական ավիափոխադրողը, դադարեցնում է թռիչքները դեպի Եվրոպա ԵՄ նոր պատժամիջոցներից հետո: Այս մասին հայտարարել է Իրանի ավիափոխադրողների ասոցիացիայի տնօրեն Մաքսուդ Ասադի Սամանին:

«Մեր երկրում միակ ավիաընկերությունը, որը թռել է Եվրոպա, եղել է «Iran Air»-ը, եւ հաշվի առնելով «Iran Air»-ի դեմ ԵՄ նոր պատժամիջոցները, դրանից հետո իրանական ոչ մի ինքնաթիռ չի թռչի Եվրոպա»,- նրա խոսքն է մեջբերում ILNA-ն, փոխանցում է ՏԱՍՍ լրատվական գործակալությունը:

ԻՐԱՆՑԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

ԻՆՉՈՒ՞ ԲԱՔՈՒՆ COP29-Ի ՀԱՄԱՐ ԱՐԺԱՆԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՉԷ

ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության համաժողովը՝ COP29-ը, անցկացվելու է Ադրբեջանում նոյեմբերի 11-ից 22-ը: Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից բնապահպանության ոլորտում բացասական վարքագիծը՝ նման համաժողովի անցկացումը Բաքվում ենթադատություններ մեծ ալիք է բարձրացրել տարբեր երկրներում:

Կովկասի հարցերով իրանցի հայտնի փորձագետ Ահմադ Քազեմին օրերս «Ինչու՞ Բաքուն COP29-ի համար արժանի հյուրընկալ չէ» վերնագրով հոդված է հրապարակել, որտեղ հստակ մատնանշել է, թե ինչու այդ համաժողովը չպետք է անցկացվի Բաքվում: Փորձագետը նախ ընդգծել է, որ Կլիմայական համաժողովն անցկացվում է այն երկրներում, որոնք մեծ դերակատարում եւ լուրջ առաջընթաց ունեն շրջակա միջավայրի պաշտպանության գործում, իսկ Ադրբեջանը, ընդհակառակը, այս առումով շատ վատ համբավ ու փորձ ունի: Փորձագետը նկատել է, որ Բաքվի նավթային արդյունահանումների հետեւանքով Կասպից ծովում վտանգված է բուսական ու կենդանական աշխարհը:

Փորձագետը նշել է, որ դեռ տասնյակ տարիներ առաջ Ադրբեջանը Կասպից ծով է լցրել Ուկրաինայից Ադրբեջան բերված միջուկային թափոնները՝ յուրաքանչյուր կոնտեյների դիմաց ստանալով 260 հազար դոլար:

«Կոյուղային ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների բացակայության պատճառով ամեն տարի խիտ բնակեցված Բաքու եւ Սումգայիթ քաղաքներից միլիոնավոր տոննա քաղաքային, կենցաղային եւ արդյունաբերական չմշակված թափոններ են լցվում Կասպից ծով, իսկ Նախիջեւանից էլ՝ Արաքս գետը»,- շարունակել է Քազեմին:

Բացի դրանից՝ փորձագետը մատնանշել է, որ շրջակա միջավայրի պաշպանության շուրջ Բաքվի հնչեցրած մտահոգությունները ձեւական ու ցուցադրական բնույթ ունեն: Որպես օրինակ՝ նա նշել է, որ Բաքուն անհանգստացած է Կասպից ծովի մակարդակի նվազմամբ միայն այն պատճառով, որ այն վնաս է հասցնում նավթարդյունահանմանը:

Քազեմին խոսել է նաեւ Ադրբեջանի Սոյուդլու գյուղի էկոլոգիական խնդիրների եւ դրանք բարձրաձայնող գյուղացիների նկատմամբ իշխանությունների գործադրած ճնշումների մասին: (Ավելի մանրամասն՝ «COP29-ը եւ Բաքվի ցինիզմը» հոդվածում):

Ըստ փորձագետի՝ ամենամյա այդ համաժողովները միայն «շրջակա միջավայրի պաշտպանության» մասին չեն, այլեւ՝ «մարդու իրավունքների», իսկ Ադրբեջանը խախտում է ոչ միայն շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենքները, այլեւ մարդու իրավունքները: Այս համատեքստում նա հիշատակել է շիա հավատացյալների ու ազգային փոքրամասնությունների նկատմամբ բռնաճնշումներն Ադրբեջանում: Փորձագետը նկատել է, որ այս վարքագիծը Բաքուն փորձում է քողարկել միջազգային միջոցառումների անկացմամբ, ինչպես, օրինակ, «Ֆորմուլա 1»-ն է:

«Ներկայում Ադրբեջանը COP29-ը փորձում է օգտագործել որպես գործիք՝ աշխարհի, հատկապես արեւմտյան աշխարհի հասարակական կարծիքը Ղարաբաղի ինքնավար շրջանի էթնիկ զտումներից շեղելու համար: 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը հարձակվեց Ղարաբաղի վրա եւ խախտեց 2020 թվականի Մոսկվայի հրադադարի համաձայնագիրը՝ պատճառ դառնալով ավելի քան 120.000 բնիկ հայերի զանգվածային տեղահանության ու բռնագաղթի եւ ոտնահարելով նրանց ունեցվածքի, պատմական, մշակութային եւ կրոնական իրավունքները: Օգտագործելով COP29 միջոցառումը եւ հյուրընկալելով մոտ 80.000 մարդու եւ ցույց տալով խաղաղ դեմք՝ Բաքուն փորձում է շեղել համաշխարհային հանրային կարծիքն այս էթնիկ զտումներից: Այդ իսկ պատճառով, Ղարաբաղից վտարված հայերին պատկանող պատմական եւ կրոնական հուշարձանների ոչնչացման մասին լուրերին զուգահեռ Ադրբեջանի նախագահը Ղարաբաղը եւ նրա շրջակա տարածքները հռչակեց «կանաչ էներգիայի» գոտիներ»,- գրել է Քազեմին:

Նա հավելել է, որ Արցախը զավթելուց բացի՝ Ադրբեջանն ագրեսիա է իրականացնում նաեւ Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ նրա տարածքը հռչակելով «Արեւմտյան Ադրբեջան» եւ հրաժարվելով խաղաղության պայմանագիր կնքել: Զուգահեռաբար Ադրբեջանն առաջ է մղում, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» հարցը, որն իր հերթին, փորձագետի գնահատմամբ, աղետաբեր է լինելու նաեւ տարածաշրջանի շրջակա միջավայրի համար: «Այս ֆոնին՝ Բաքվի կողմից COP29-ի հյուրընկալումը դառը հեգնանք է շրջակա միջավայրի վերաբերյալ միջազգային օրենքների նկատմամբ»,- համոզմունք է հայտնել Քազեմին:

Որպես վերջաբան՝ Ահմադ Քազեմին ընդգծել է, որ այս համաժողովը Բաքվում է անցկացվում Ադրբեջանի նավթադոլարների շնորհիվ, սակայն իրականում Ադրբեջանը ՄԱԿ-ի՝ Կլիմայի փոփոխության համաժողովի անցկացման համար արժանի հյուրընկալ չէ:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԿԿԱԶՄԱԿԵՐՊՎԻ՞

Շվեյցարիայի խորհրդարանում երկրի կառավարությանը կոչ են արել Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ խաղաղության միջազգային համաժողով կազմակերպել: Շվեյցարիայի Դաշնային խորհրդի (խորհրդարանի ստորին պալատ) արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունել է համապատասխան բանաձեւը:

Դաշնային խորհրդի կողմից ընդունվելուց հետո բանաձեւը կքննարկվի նաեւ խորհրդարանի վերին պալատում:

Համաժողովի նպատակը կլինի «դյուրացնել Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի հայերի ներկայացուցիչների միջեւ երկխոսությունը հայ բնակչության անվտանգ եւ հավաքական վերադարձի շուրջ՝ միջազգային դերակատարների հսկողությամբ կամ ներկայությամբ»:

Հիմնավորման մեջ նշվում է, որ 2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի վերջին ռազմական հարձակումից ի վեր Լեռնային Ղարաբաղը զրկվել է հայ բնակչությունից:

«Վախենալով նոր ցեղասպանությունից, ինչպիսին 1915 թվականին հայերի դեմ իրագործվեց՝ բնակչությունը ստիպված եղավ մի քանի օրվա ընթացքում լքել իր հայրենիքը: Այդ ժամանակից ի վեր տարածաշրջանում տեղի են ունենում փաստագրված էթնիկ զտումներ. հայկական մշակութային ժառանգությունը, ինչպիսիք են եկեղեցիները, վանքերն ու գերեզմանատները, սիստեմատիկորեն ոչնչացվում կամ ձեւախեղվում են՝ «վերանորոգման» անվան տակ:

Չնայած այս լուրջ իրադարձություններին, Լեռնային Ղարաբաղի հայերը պահպանում են միջազգային հանրության անվտանգության երաշխիքների ներքո հայրենիք վերադառնալու, սեփական քաղաքական ապագան որոշելու եւ ժողովրդավարական ինքնակառավարում իրականացնելու ցանկությունը: Միջազգային հանրությունը բազմիցս հանդես է եկել որոշակի դիրքորոշմամբ:

2023 թվականի նոյեմբերի 17-ին Միջազգային դատարանը վճռեց, որ Ադրբեջանը պարտավոր է ապահովել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության «անվտանգ, անարգել եւ արագ վերադարձը»...Սա ընդգծում է հակամարտության խաղաղ կարգավորման եւ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքների պաշտպանության համար բանակցությունների նոր ձեւաչափի անհրաժեշտությունը»,- ասված է հիմնավորման մեջ:

ՔՐԳՈՐԾ

ԻՆՉՈ՞Ւ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՆՈՋԸ ՉԵՆ ՀԱՐՑԱՔՆՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ Ծիծեռնակաբերդի միջադեպի գործով:

Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթին հաստատել էր փաստաբան Արայիկ Պապիկյանը՝ հայտնելով, որ նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործն ուղարկվել է դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար: Գործը դատարանում է, Կենտրոնի նստավայրում կայացել էր դատական նիստը:

Մենք հայտնել էինք, որ միակ մեղադրյալը 67 տարեկան պապիկ, ԱԺԲ անդամ Տիգրան Դերմոյանն է: Նա շարունակում է մնալ միակ մեղադրյալը, ու գործը գնում է դատարան, տեսնենք, թե ինչ կլինի այնտեղ:

Հիշեցնենք, որ 2024թ. ապրիլի 24-ին՝ «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի եւ նրա դստեր ներկայությամբ «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամները բղավել էին՝ «դավաճան», «հողատու»: Միջադեպից հետո 7 անձ ձերբակալվել էր:

Արդյունքում՝ մի խումբ անձանց կողմից առերեւույթ ատելության, խտրականության, անհանդուրժողականության կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելու, եւ հաղորդակցային-տեղեկատվական մի քանի միջոցներով տարածելու գործողությունների դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաձեռնվել է քրեական վարույթ:

«Ժողովուրդ» օրաթերթը դատական նիստից հետո հարց ուղղեց գործով դատախազին, թե ինչու միայն թիրախավորեցին 67-ամյա պապիկին եւ ինչու, ի վերջո, վարչապետի կնոջը չեն հարցաքննել: Ի պատասխան՝ դատախազը պարզապես հեգնական ներողություն խնդրեց ու շտապեց դուրս գալ դատարանի շենքից՝ այդպես էլ մեր հարցին պատասխան չտալով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԱՅՑԸ

Լրագրող Նաիրի Հոխիկյանը ֆեյսբուքյան գրառմամբ հայտնել է, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հայցը Նաիրի Հոխիկյանի դեմ եւ համարել անհիմն:

«Հիշեցնեմ, որ 2023-ի սեպտեմբերի 20-ին, երբ Ադրբեջանը ահաբեկչական հարձակում էր սկսել Արցախի վրա, ՀՀ ԱԺ նախագահը զբաղված էր իմ դեմ դատական հայց ներկայացնելով՝ իրեն իբր թե վիրավորելու համար: Դատական հայցի հիմքում ավելի վաղ հարցազրույցի ժամանակ իմ արած արտահայտությունն է եղել, որտեղ ես Ալեն Սիմոնյանին անվանել եմ «պոռնոդերասան, որ մինչեւ պաշտոնյա դառնալը տարբեր ֆիլմերի մեջ էր խաղում...»:

Թեպետ Ալենի մասնակցությամբ բաց, կիսամերկ, սեռական հարաբերությունների 18+ տեսարաններով ֆիլմեր կան համացանցում, բայց ամեն դեպքում ԱԺ նախագահը վիրավորվել էր իմ խոսքից:

Հայ իրականության ամենապրոֆեսիոնալ եւ ազգային մտածողությամբ փաստաբաններից մեկի՝ Փաստաբան Լուսինե Վիրաբյանի հմուտ աշխատանքի շնորհիվ Առաջին ատյանի դատարանը ամբողջությամբ մերժել էր Ալենի հայցը, որից հետո Ալեն Սիմոնյանի փաստաբանական թիմը բողոքարկել էր վերաքննիչ քաղաքացիական դատարան, որն էլ 2024թ. հոկտեմբերի 14-ի որոշմամբ նույնպես մերժել է Ալենին:

Ես մեկնաբանություններից զերծ կմնամ, իսկ դուք ձեր եզրակացություններն արեք...»,- գրել է Հոխիկյանը:

Ո՞ՒՐ ԵՆ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՓՈՂԵՐԸ

Փաստաբան Հարութ Ակլունցը ֆեյսբուքյան էջում գրում է. «2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով (59-րդ հոդվածի 6-րդ մաս, 128-րդ հոդվածի 5-րդ մաս) առաջին անգամ սահմանվեցին կարգավորումներ, որոնցով նախատեսվում է հանցագործություններից տուժողներին պատճառված վնասի փոխհատուցում պետության կողմից: Ընդ որում, այդ գումարները պետք է գոյանան տուգանք պատժատեսակի կիրառման արդյունքում հավաքարգրված գումարների հաշվին:

Ինչպես գիտեք՝ ներկայում տուգանք պատժատեսակը լայնորեն կիրառվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից վարելու գործերով: Ու այդ գումարը, կախված անձի եկամտից, կարող է կազմել մի քանի հարյուր հազարից մինչեւ միլիոն դրամներ:

Քրեական օրենսգիրքն ուժի մեջ է արդեն երկու տարուց ավելի: Ուստի վերջերս հարցում էի կատարել ֆինանսների նախարարություն՝ պարզելու, թե քանի անձ է վճարել տուգանք, որքան գումար է հավաքագրվել, քանի տուժողի է փոխհատուցում տրվել եւ որքան:

Եվ ահա, պարզվեց՝ երկու տարում որեւէ մեկին փոխհատուցում չի տրամադրվել: Ի հակառակ օրենքի պահանջի՝ նույնսիկ այդպիսի հնարավորություն չի նախատեսվել բյուջեով, եւ ավելին՝ չի հաշվառվում հավաքված գումարը՝ ապագայում նման ծրագիր իրականացնելու համար: Մի խոսքով՝ օրենքի պահանջը կատարելու հույսեր էլ չկան:

Հ.Գ. Իրավաբանական օգնության հարկը ավելացնելու օրենքի նախագծեր մշակելու փոխարեն ֆինանսների նախարարությունը լավ կանի դեռ գործող օրենքների պահանջների կատարումն ապահովի, որ հանցագործություններից տուժողները կարողանան իրենց հասանելիք գումարները ստանալ»:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԻՆՉՆ Է ԵՂԵԼ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ



Հոկտեմբերի 16-ի գիշերը՝ ժամը 1:29-ին, ՆԳՆ ոստիկանության Արարատի օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ «Վեդի» բժշկական կենտրոնի շտապօգնության խումբը դանակահարության կանչով մեկնել է Նոր Ուղի, որտեղ արձանագրել է նույն գյուղի բնակիչ 34-ամյա Սերոբ Ստեփանյանի մահը:

ՆԳՆ ոստիկանության հաղորդագրության համաձայն՝ ահազանգով մեկնած ոստիկանության Արարատի բաժնի օպերատիվ խումբը եւ պարեկային կարգախումբը ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ ժամը 1-ի սահմաններում գյուղի Թումանյան փողոցի հասցեներից մեկում կենցաղային հարցի շուրջ ծագած վեճի ժամանակ Փոքր Վեդի գյուղի բնակիչ 46-ամյա տղամարդը սուր կտրող-ծակող առարկայով հարվածներ է հասցրել Սերոբ Ստեփանյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կենսաբանական մահ, ինչպես նաեւ մարմնական վնասվածք է պատճառել նրա 37-ամյա եղբորը:

«Ոստիկանության Արարատի բաժնի, մարզային վարչության եւ պարեկային ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում 46-ամյա տղամարդը ժամը 2:35-ին հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է Արարատի բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է հանցագործության գործիք դանակը:

Փոքր Վեդի գյուղի բնակիչ 46-ամյա տղամարդը, կազմված փաստաթղթերը եւ հանցագործության գործիքը ներկայացվել են Վեդիի քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք՝ կասկածյալին հայտնաբերել են դանակի հետ միասին, որի վրա առկա են եղել արնանման հետքեր եւ ըստ նախնական տեղեկությունների՝ հայտնաբերվածը հանցագործության գործիք հանդիսացող դանակն է, որը Գալուստ Գ.-ի հետ միասին ոստիկանները ներկայացրել են Վեդու քննչական բաժին:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նոր Ուղի գյուղի Թումանյան փողոցում Գ. Գ.-ն սուր կտրող-ծակող առարկայով հարվածներ է հասցրել Ս.Ս.-ի մարմնի տարբեր մասերին, ինչի արդյունքում 34-ամյա երիտասարդը մահացել է:

Այս դեպքով ենթադրյալ հանցագործը ձերբակալված է, իսկ ահա վիճաբանության պատճառը եղել է հայհոյանքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 15-ից 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 81 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎՆԱՄՆԵՐԸ ԴԵՌ ՉԵՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԵԼ

Տավուշի մարզպետարանը, հղում անելով «Հիդրոօթերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ մարզի բնակչությանը նախազգուշացնում է առաջիկա օրերին հորդ անձրեւների, դրա հետեւանքով՝ հոկտեմբերի 17-18-ին հանրապետության գետերի մեծ մասրում ջրի ելքերի զգալի ավելացման մասին: Այս տարվա մայիսի 27-ի ջրհեղեղից տուժած տավուշցիներից քչերին է պետբյուջեից դրամական փոխհատուցում տրվել, միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեւան հատվածում ջրհեղեղից քանդած հատվածները դեռ վերականգնված չեն, այժմ էլ նոր ջրհեղեղի մասին են զգուշացնում:

2–3 ԱՄԻՍԸ ՄԵԿ ԵՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՍՏԱՆՈՒՄ

Իջեւան քաղաքում՝ միջպետական ավտոճանապարհի եզրին, խորհրդային տարիներին գործած հանրախանութի շենքի երկու հարկերում գործում են կարի արտադրամասեր: Երկրորդ հարկում հնդիկ երիտասարդներ են աշխատում, առաջին հարկում՝ Իջեւան քաղաքի, սահմանամերձ Սարիգյուղ, Սեւքար, Բերքաբեր գյուղերի բնակիչ կարող բանվորուհիներ: Բանվորուհիները դժգոհում են, որ իրենք աշխատավարձը ուշացումներով՝ 2-3 ամիսը մեկ են ստանում: Կարի այդ արտադրամասի բանվորներն ասացին, որ իրենք հանդերձանք են կարում Հայաստանի բանակի զինծառայողների համար: Հարց է ծագում՝ ՀՀ պաշտպանությունը այդ ձեռնարկությանը ժամանակին չի՞ վճարում կատարած պատվերների դիմաց, թե՞ այդ ընկերության տնօրինությունն է անհարկի կերպով ձգձգում աշխատավարձերի վճարումը: Այդ խնդրի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար տարբերի օրերի բազմաթիվ անգամներ զանգահարեցինք «Տեքսուվորլդ» ՍՊԸ տնօրեն Ռազմիկ Օհանյանին, սակայն նա չարձագանքեց:

ՄԻ ԾՐԱԳԻՐ, ԱՅՆ ԷԼ՝ ԹԱՂԻՑ

Կառավարության՝ հոկտեմբերի 10-ի նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանգամանալից, ըստ մարզերի համայնքների, ներկայացրեց պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերը: Տավուշի մարզն ունի 5 քաղաք, 57 գյուղ, Նիկոլ Փաշինյանը մարզի 62 բնակավայրերից միայն մեկ բնակավայրում ծրագիր ներկայացրեց՝ Իջեւան համայնքի Իջեւան քաղաքի Բլբուլյան-Այգեստան փողոցների խաչմերուկից մինչեւ Այգեստան-Ասլանյան խաչմերուկ ընկած ճանապարհահատվածի ասֆալտապատումը, որն իրականացվել է: Իջեւան քաղաքը Նիկոլ Փաշինյանի հայրենի քաղաքն է, Ասլանյան փողոցում գտնվում է իր հայրական տունը: Այդ փուլում Տավուշի մարզից իրականացվել է ընդամենը մեկ ծրագիր, այն էլ՝Նիկոլ Փաշինյանի թաղում: Տավուշի մարզում բազում չլուծված հիմնահարցեր կան, հանրակրթական շատ դպրոցների շենքեր վատթար վիճակում են, սահմանամերձ Բարեկամավանի բուժկետի տանիքի ծածկը 4 տարի բաց է, սակայն չեն նորոգում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՌԴ-ՈՒՄ

ԿՎԱԴՐՈԲԵՐՆԵՐԸ «ՀԱՄԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆ

Կվադրոբերները դարձել են պատուհաս Ռուսաստանի Դաշնությունում, Լավրովն անհանգստացած էր, Միրզոյանը ֆիչ, թե շաս, տեղյակ:

Կրեմլում Նիկոլ Փաշինյան-Վլադիմիր Պուտին հանդիպմանն ընդառաջ՝ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը հայ գործընկերոջ ու Ռուսաստանում Հայաստանի նորանաշնակ դեսպան Գուրգեն Արսենյանի հետ զրույցում քննարկել է երեխաների՝ շան պես քայլելու երեւույթը, որն այժմ տարածված է, իսկ դրանք կոչվում են կվադրոբերներ:

Վերջին մեկ ամսվա ընթացքում տեղեկատվական դաշտում տեղ է գտել «կվադրոբեր» բառը: Կատուների ու շների մասին մանկական մոլուցքը հանկարծ դարձել է քննարկման հիմնական թեման, որի շուրջ արդեն բարձրաձայնում են պատգամավորներն ու նախարարները: Միեւնույն ժամանակ լրահոսում համայնքի անդամները հայտնվեցին սարսափելի պատմությունների էպիկենտրոնում:

Նախ եւ առաջ ամենակարեւոր հարցն է՝ ի՞նչ բառ է «կվադրոբերը»:

Սա մարզումներ կատարող մարդ է: Quadrobics բառը առաջացել է որպես քվոտուոր (թիվ 4) եւ աերոբիկա ձեւակերպումներից, այսինքն՝ վարժություններ եւ տեխնիկա, որոնք պետք է կատարվեն չորս վերջույթների/թաթերի վրա:

Կվադրոբերի նախահայրը համարվում է ճապոնացի Կենիչի Իտոն, ով 2000-ականների վերջին սկսեց չորս ոտքով հարյուր մետր վազել եւ ռեկորդներ սահմանել:

ՌԴ Պետդումայի պատգամավորներն առաջարկում են տուգանքներով պատժել այն երեխաներին, ովքեր չորեքթաթ վազում են կատվի եւ շան դիմակներով, ինչպես նաեւ այն ծնողներին, ովքեր իրենց երեխաների հետ ինչ-որ իմաստով խոսելու փոխարեն նրանց հետ քայլում են շղթաներով: Նախատեսվում է նաեւ արգելել քվադրոբինգի քարոզչությունը, որը բառացիորեն հակադարձում է էվոլյուցիայի գործընթացին՝ զրկելով մարդկանց մարդկային արարքներից:

Կատուների եւ շների հագուստով աշակերտներին թույլ չեն տալիս մտնել ռուսական դպրոցներ:

Վերջերս Aurora News-ի տեսախցիկը ԵՊՀ-ի տարածքում ֆիքսել էր կվադրոբերի, որը շրջում էր շան հետ:

Հայաստանում դրանց դրսեւորումներն ակնհայտ չեն, նույնիսկ Ազգային ժողովում նման քննարկումներ չեն եղել, ինչպես ՌԴ Պետդումայում:

Մի քանի հայտնի դեպքեր կան կապված կվադրոբերների հետ.

Օրինակ՝ վերջերս Օմսկում տեղի ունեցած միջադեպը մեծ աղմուկ էր բարձրացրել, երբ մայրը շան կոստյումով զբոսնել էր որդու հետ: Եկատերինբուրգում մետրոյի վագոնում գտնվող տղան սկսել է քսվել ուղեւորների ոտքերին՝ ձեւանալով, թե կատու է: Իսկ Կրասնոդարում կվադրոբեր աղջիկը հարձակվել է մյուսի վրա ու կծել նրան:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԻՆՉ ՍՊԱՍԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Թե՛ հասարակական տրանսպորտը, թե՛ մետրոն տհաճ անակնկալներ են մատուցում բաղաքացիներին: Այս երկու փոխադրամիջոցներից օգտվողները ստիպված են լինում երկար ժամանակ սպասել կանգառներում կամ հերթերում, որպեսզի A կետից տեղափոխվեն B կետ:

Ինչպես հայտնի է՝ հաջորդ ամսվանից՝ նոյեմբերի 1-ից, հասարակական տրանսպորտից օգտվելու համար պարտադիր պայման է լինելու 100 դրամանոց մետաղադրամի առկայությունը կամ ավտոբուսներում տեղադրված վճարային համակարգով QR կոդի միջոցով վճարում իրականացնելը: Խոսքը հատկապես MAN, ZhongTong եւ GazelCity մակնիշի փոխադրամիջոցների մասին է:

Իհարկե, այս հայտարարությունը բացարձակ ուրախությամբ եւ գոհությամբ չի ընդունվել տրանսպորտային միջոցներից օգտվողների շրջանում, քանի որ հատկապես QR կոդով հասարակական տրանսպորտից օգտվելը շատերի համար դժվարություններ է առաջացնում:

Չշեղվելով QR կոդերի թեմայից՝ հարկ է նշել, որ Երեւանի մետրոյում եւս խնդիրներ են առաջացել օգտվողների համար:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն ահազանգեր են ստացվել, որ մետրոյի QR կոդերից օգտվելը նոր «փորձություն» է դարձել, քանի որ QR կոդերի համար նախատեսված սարքերը կամ չեն աշխատում, կամ կոդը չեն սքանավորում: Իսկ ինչ վերաբերում է բանկային համակարգով վճարումներին, ապա այստեղ էլ նույն պատմությունն է, սակայն մեկ տարբերությամբ. այս դեպքում միայն չեն աշխատում:

Խնդրով պայմանավորված՝ «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն՝ պարզելու, թե ինչ քայլեր են ձեռնարկվում առկա խնդիրներն ու դժգոհությունները վերացնելու համար:

Դիմել ենք նաեւ Երեւանի քաղաքապետարան հասկանալու համար՝ հասարակական տրանսպորտում առկա խնդիրների լուծումները: Արձագանքների մասին կտեղեկացնենք:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԹԻՄ ՏԵԼԵԿՈՄ»

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ՝ AI ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Team Telecom Armenia-ի աջակցությամբ տեղի ունեցավ AI Conf 2024-ը՝ Հայաստանի ամենամեծ արհեստական բանականության համաժողովը, որը մեկ հարկի տակ էր համախմբել արհեստական բանականության ոլորտի մասնագետներին, տելեկոմ եւ ֆինանսաբանկային ոլորտների ներկայացուցիչներին:

Միջոցառմանը բացման խոսքով ելույթ ունեցավ Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը՝ նշելով, որ ընկերությունը կարեւոր ներդրումներ է անում, որոնք սպասարկելու են AI տեխնոլոգիաներին եւ նպաստելու են դրանց օգտագործման ծավալների մեծացմանը:

Միջոցառման նպատակն էր քննարկել եւ հասկանալ, թե ինչ քայլեր է անում Հայաստանը AI տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ եւ ինչպես են տարբեր ոլորտների ընկերություններ սկսել օգտագործել դրանք:

«Կառուցելով պրոդուկտը արհեստական բանականության միջոցով» պանելային քննարկմանը ընթացքում Team Telecom Armenia-ի պրոդուկտների եւ վիճակագրության բաժնի ղեկավար Վասիլի Պիսարեւը ներկայացրեց, թե ինչպես են ընկերությունում AI-ը օգտագործում նոր պրոդուկտներ մշակելու եւ մարքեթինգային արշավներ իրականացնելու համար:

Team Telecom Armenia-ի մասին

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:

Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

«ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ» Գ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

«Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ» կրթական ծրագիրը փորձարկող Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան N5 ավագ դպրոց է այցելել մարդասեր, «Flagship Pioneering» ընկերության հիմնադիր տնօրեն, «Moderna» ընկերության համահիմնադիր եւ տնօրենների խորհրդի նախագահ, Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) համահիմնադիր դոկտոր Նուբար Աֆեյանը:

Դոկտոր Աֆեյանը հանդիպել է ծրագրի աշակերտների հետ, ծանոթացել նրանց առաջին նախագծերին եւ ոգեւորել սովորողներին զարգացնելու նորարարության ձգտումն ու ստեղծարար միտքը: Նրան միացել էր դոկտոր Արմեն Մկրտչյանը, որը գլխավորում է Pioneering Intelligence-ը՝ նախաձեռնություն կոչված ընդլայնելու արհեստական բանականության կիրառությունը Flagship Pioneering-ում եւ դրա պորտֆելի մեջ մտնող ընկերություններում:

Դոկտոր Աֆեյանն աշակերտների հետ զրույցում նշել է. «Դուք կարող եք ստեղծել այն, ինչ կարող եք երեւակայել: Ես Ձեզ ուզում եմ քաջալերել, որ ոչ միայն արվեստի, այլեւ գիտության մեջ օգտագործեք ձեր երեւակայությունը»:

Դոկտոր Մկրտչյանն էլ, որն ինքն էլ ծնունդով Արմավիրից է, պատմել է Հայաստանից մինչեւ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ եւ «Flagship Pioneering» ընկերություն անցած իր ուղու մասին ու ոգեւորել ծրագրի մասնակիցներին՝ լավ սովորել, համարձակ մտածել ու բաց չթողնել արհեստական բանականության մեջ վաղ տարիքից մասնագիտանալու ընձեռնված հնարավորությունը:

Վաղարշապատի N5 ավագ դպրոցը մեկն է հանրապետության այն 15 ավագ դպրոցներից, որոնք 2023 թվականի սեպտեմբերից փորձարկում են «ԱԲ սերունդ» ծրագրի դպրոցական բաղադրիչը: FAST-ի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ իրականացվող այս ծրագիրը ներգրավել է 540 աշակերտ: Ուսուցիչների եւ ԱԲ ոլորտի մասնագետների աջակցությամբ աշակերտներն ուսումնասիրում են խորացված մաթեմատիկա, Python ծրագրավորման լեզու եւ արհեստական բանականություն:

Ի լրումն այցին՝ դոկտոր Նուբար Աֆեյանը լինելու է նոյեմբերի 16-ին Փարիզում կայանալիք FAST-ի Advance Armenia Gala բարեգործական ընթրիքի բանախոսներից մեկը: Միջոցառմանը նվիրաբերված բոլոր միջոցներն ուղղվելու են «ԱԲ սերունդ»-ի աշակերտների ուսումնառության ապահովմանն ու ծրագրի ընդլայնմանը:

FAST հիմնադրամը ստեղծվել է 2017 թվականին Հայաստանը գիտությամբ եւ նորարարությամբ առաջատար երկիր դարձնելու առաքելությամբ: Հիմնադրամն իրականացնում է նախագծեր կրթության, գիտության եւ գիտական արդյունքի առեւտրայնացման ուղղություններում: Իր գործունեության յոթ տարվա ընթացքում հիմնադրամն իրականացրել է 26 ծրագիր ավելի քան 15 հազար շահառուի համար:

«ԱԲ սերունդ» դպրոցական նախագիծը նույնանուն ծրագրի առաջին բաղադրիչն է, որն իրականացնում է FAST-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ՝ ոլորտային կառույցների գործակցությամբ: Ծրագրի նպատակն արհեստական բանականության ոլորտի նորարարի եւ հետազոտողի ողջ կրթական ուղու ձեւավորումն է՝ սկսած ավագ դպրոցից: Մինչեւ 2026-ը նախատեսվում է ծրագիրը հասանելի դարձնել հանրակրթական դպրոցների աշակերտների ավելի քան 80%-ի համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԴՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման 249 դեպք եւ շուրջ 131 մլն դրամի չափով տուգանք:

Արձանագրված խախտումներից 11 դեպքով 11 հարկ վճարողի մոտ արձանագրվել է 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք՝ ընդհանուր 65.6 մլն դրամի չափով:

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման դեպքերով 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք արձանագրվել է փաստացի գործունեության հետեւյալ ոլորտներում.

- առեւտրի իրականացման վայրի կազմակերպման ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 2.56 մլն դրամ տուգանք,
- կացության կազմակերպման ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 2.07 մլն դրամ տուգանք,
- հանրային սնունդ (չունի հանդիսությունների սրահ) 1 դեպքով արձանագրվել է 2.08 մլն դրամ տուգանք,
- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի ոլորտում 1 դեպքով արձանագրվել է 10 մլն դրամ տուգանք,
- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, այլ ոլորտներում 1 դեպքով արձանագրվել է 10 մլն դրամ տուգանք,
- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, ավտոգազալցակայանի ոլորտներում 1 դեպքով արձանագրվել է 22.68 մլն դրամ տուգանք,
- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, ավտոտեխսպասարկման եւ (կամ) ավտոլվացման, ավտոպահեստամասերի առեւտրի ոլորտներում 1 դեպքով արձանագրվել է շուրջ 7.8 մլն դրամ տուգանք,
- մթերային խանութում 3 հարկ վճարողի մոտ 3 դեպքով արձանագրվել է շուրջ 6.95 մլն դրամ տուգանք:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Դամալա Ֆիշ» ՍՊԸ-ի կողմից՝ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի բնակավայրի վարչական տարածքում ձկնաբուծական նպատակով Հրազդան գետից 142.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերինփ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում՝ փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 21-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակում:

Շրջակա միջավայրի նախարարություն

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐԴԵՆ 20 ՏԱՐԵԿԱՆ

ԻՆՉ ՃԱՆԱՊԱՐՀ Է ԱՆՑԵԼ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Հայ մամուլի օրը նշվում է 2004 թվականից սկսած՝ հոկտեմբերի 16-ին:

1794 թվականի նույն օրը Մադրասում հրատարակվեց հայ մամուլի առաջնեկը՝ «Ազդարարը»՝ Հարություն քահանա Շմավոնյանի նախաձեռնությամբ:

Սկզբում տոնը կոչվել է Հայ մամուլի աշխատակցի օր, որը հետագայում որոշվեց դարձնել Հայ մամուլի օր:

Հայաստանի ժուռնալիստների միությունը Հայ մամուլի օրը հայկական լրատվամիջոցներին շնորհում է «Ազդարար» ամենամյա մրցանակը՝ «Լավագույն պարբերական մամուլ», «Լավագույն մարզային մամուլ», «Լավագույն հեռուստաընկերություն», «Լավագույն ռադիոկայան» եւ «Լավագույն թղթակից» անվանակարգերով:

Սկիզբ առնելով Մադրասում՝ հայ մամուլի տպագրությունն այնուհետեւ տարածվել է ամբողջ աշխարհում. «Տարեգրություն»-ը՝ տպագրված Վենետիկում 1799 թվականին, «Արմենիա»-ն Մարսելում՝ 1885 թվականին, «Արշալույս Արարատյան»-ը Զմյուռնիայում՝ 1840 թվականին: 19-րդ դարի երկրորդ կեսին, պարբերականների աճին զուգահեռ, դրանց ուսումնասիրությունը զարգացման նոր փուլ մտավ:

Սկսեցին հրատարակվել ոչ միայն պարբերականների լրիվ ցուցակներ, այլեւ առանձին պարբերականների կամ առանձին աշխարհագրական վայրում հրատարակված պարբերականներին վերաբերող ուսումնասիրություններ:

Այժմ «Ազդարարի» պես տպագիր շատ քիչ թերթեր են մնացել, որոնց տպաքանակը հիմնադրման ժամանակահատվածի հետ համեմատած նվազել է:

Հայաստանում 2000-ականներին գործում էին «Ժողովուրդ», «Առավոտ», «Հրապարակ», «Հայաստանի Հանրապետություն», «Իրավունք», «Չորրորդ իշխանություն», «Ազգ», «Հայկական ժամանակ» եւ այլ օրաթերթեր:

Հայ մամուլը բազմաթիվ խոչընդոտներ է հաղթահարել, ամեն նոր իշխանության կողմից թիրախավորվել է, հաղթահարել է բազում արհավիրքներ, սակայն աներեր կանգնել է ոտքերի վրա եւ ծաղկեցրել հայ մամուլի ոսկեղեն լեզուն:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը շնորհավորում է Հայ մամուլի 20 ամյակը եւ մաղթում աշխատաշատ եւ բեղուն ընթացք:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՋՆԱՎՈՒՐ ԵՎ ՓԱՐԱՋԱՆՈՎ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՐ՝ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ

Ղազախստանում այսօր մեկնարկել են Հայաստանի մշակույթի օրերը, որին մասնակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պատվիրակությունը՝ նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորությամբ:

Մշակույթի օրերի հանդիսավոր բացմանը ներկա են եղել նաեւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը եւ Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը:

Հայաստանի մշակույթի օրերի միջոցառումները տեղի են ունենում Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում՝ Քալիբեկ Կուանիշբաեւի անվան ազգային երաժշտական դրամատիկական թատրոնում: Միջոցառմանը ներկա է եղել նաեւ Ղազախստանի մշակույթի եւ տեղեկատվության նախարար Աիդա Բալաեւան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը ողջույնի խոսքում շնորհակալություն է հայտնել երկու երկրների նախագահներին այս կարեւոր մշակութային նախաձեռնությանը աջակցելու եւ Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերը կազմակերպելու համար:

«Ղազախստանի մշակութասեր հանրությանը հայկական մշակույթի ներկայացումը շատ կարեւոր է. հատկապես, որ մշակութային ծրագրի առանցքում մեծանուն հայ արվեստագետներ Շառլ Ազնավուրի եւ Սերգեյ Փարաջանովի ստեղծագործական ժառանգության ներկայացումն է, ինչը պատահական չէ: Այս տարի ողջ աշխարհը նշում է նրանց 100-ամյա հոբելյանները: Պատահական չէ նաեւ Սոս Սարգսյանի անունը կրող թատերախմբի ընտրությունը. Սոս Սարգսյանին, համոզված եմ, ճանաչում եւ հիշում է նաեւ Ղազախստանի հանրությունը: Նրանք բոլորը՝ ամեն մեկն իր ինքնատիպ ոճով, խոսել են մշակույթների փոխճանաչման անհրաժեշտության եւ մշակույթների փոխազդեցության վերաբերյալ, իրենց կյանքով ու գործով փաստել մշակույթի միավորող ուժը:

Հայաստանի եւ Ղազախստանի ժողովուրդների մշակութային երկխոսության ամենավառ արտահայտություններից են նաեւ ղփչաղական ձեռագրերը, որոնք մեծ հոգածությամբ ու խնամքով պահվում են Երեւանում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում»,- նշել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ Հայաստան-Ղազախստան մշակութային համագործակցությունը շարունակում է զարգանալ՝ ընդգրկելով արվեստի գրեթե բոլոր ուղղությունները, որը ամուր հիմք է երկու պետությունների միջեւ նաեւ այլ ասպարեզներում կապերի ամրապնդման համար:

Ղազախստանի մշակույթի եւ տեղեկատվության նախարար Աիդա Բալաեւան եւս ողջունել է Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերի անցկացումը՝ մաղթելով մասնակիցներին ստեղծագործական ներշնչանքներ, իսկ հանդիսատեսին՝ անմոռանալի տպավորություններ:

«Բարեկամ երկրների մշակույթի օրերը մեզ համար կարեւորագույն միջազգային իրադարձություններ են հանդիսանում՝ երկրների եւ ժողովուրդների միջեւ գործընկերային հարաբերությունների խորացման գրավական եւ բարեկամության կամուրջ: Համոզված եմ, որ Մշակույթի օրերը նոր խթան կհանդիսանան երկու երկրների մշակութային եւ հոգեւոր արժեքների հետագա զարգացման համար»,- ասել է նա:

Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերը մեկնարկել են Հայաստանի ջազ նվագախմբի (գեղարվեստական ղեկավար՝ Դավիթ Մելքոնյան)՝ Շառլ Ազնավուրին նվիրված համերգային ծրագրով: Հանդես են եկել Հայաստանի վաստակավոր արտիստուհի Ինգա Արշակյանը եւ միջազգային մրցույթների դափնեկիր Գոռ Սուջյանը: Համերգային ծրագրում հնչել են նաեւ Կոմիտասի եւ Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունները:

Քալիբեկ Կուանիշբաեւի անվան ազգային երաժշտական դրամատիկական թատրոնի ճեմասրահում բացվել է Սերգեյ Փարաջանովի կյանքին եւ գործունեությանը նվիրված ֆոտոցուցահանդեսը, իսկ 7 IMAX KERUEN կինոթատրոնում մեկնարկել է հայկական կինոյի օրերի ծրագիրը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ-21 ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՊԱՐՏՎԵԼ Է ԱԼԲԱՆԻԱՅԻՆ

Հոկտեմբերի 15-ին Տիրանայում կայացել է ՈւԵՖԱ 2025թ. Եվրոպայի Մ-21 առաջնության որակավորման փուլի վերջին տուրի Ալբանիա-Հայաստան հանդիպումը:

Հայաստանի ընտրանին պարտվել է մրցակցին 0:1 հաշվով:

Ինչպես հայտնել են ՀՖՖ-ից, խաղում վճռորոշ է եղել 57-րդ րոպեին Ավետիս Ավետիսյանի ինքնագոլը:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ. ԴԵՊԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՍԿԻՆ

Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայից հայտնում են, որ Հայաստանն ունի առաջին մեդալը Բուլղարիայում ընթացող բռնցքամարտի մինչեւ 22 տարեկանների Եվրոպայի առաջնությունում:

Մրցաշարի գործող չեմպիոն Էլիդա Քոչարյանը շարժվում է դեպի հերթական ոսկին: 1/4 եզրափակիչում հայ մարզուհին հաղթել է վրացի Լանա Բոլկվաձեին եւ դուրս գալով կիսաեզրափակիչ՝ ապահովել առնվազն բրոնզե մեդալ:

Հոկտեմբերի 16-ին կիսաեզրափակիչ դուրս գալու եւ մեդալ ապահովելու համար կպայքարեն տղաները: 1/4 եզրափակիչում Հայաստանն ունի 8 բռնցքամարտիկ:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ՝ ԱՌԿԱԽ

Արդեն տեւական ժամանակ է, ինչ Լոզանի դատարանը չի արձագանքում հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանի թիմի դիմումին: Ավելի վաղ գրել էինք, որ դատարանի որոշումը հետաձգվել է մինչեւ հոկտեմբերի 10-ը. հավելյալ ժամանակը նախապատրաստվելու համար էր:

«Ժողովուրդ» օրաթերթը այս անգամ կրկին կապ հաստատեց Արթուր Ալեքսանյանի հայրիկի՝ Գեւորգ Ալեքսանյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչ փոփոխություններ են եղել եւ ինչ են պատասխանել դատարանից: Վերջինս մեզ հետ զրույցում ասաց, որ դեռ արձագանք չի եղել. «Այս պահին մենք սպասում ենք դատարանի որոշումներին, թե ով է ընտրվելու դատավոր եւ երբ է նշանակվելու դատի օրը»,- ասաց Գեւորգ Ալեքսանյանը:

Հիշեցնենք, որ Ֆրանսիայում ընթացող Օլիմպիական խաղերում արծաթե մեդալ նվաճած հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը (97 կգ) Փարիզում ասել էր, որ կբողոքարկի եզրափակիչ հանդիպումը: Նա դժգոհ է մրցակցությունից, որն իրեն զրկել է ոսկե մեդալից:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արթուր Ալեքսանյանն իր թիմի հետ դիմել էր Լոզանի դատարան, եւ սպասում են պատասխանի:

● *Հոկտեմբերի 21-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Art փսիխոզ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԼԻԶԻՆԳ

ՀԱՐՑ. Հնարավո՞r է արդյոք լիզինգով ձեռք բերել նաեւ ագրոպարենային ոլորտի սարքավորումներ:

Իրինա Գասպարյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. 2018 թվականի հուլիսից մեկնարկել է «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիրը, որի հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է: Լիզինգը տրամադրվում է դրամով մինչեւ 8 տարի ներառյալ մարման ժամկետով, տարեկան մինչեւ 11 տոկոս տոկոսադրույքով, որի մինչեւ 7 տոկոսային կետը սուբսիդավորում է, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 4 տոկոս, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 11 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար: Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 450.0 մլն դրամը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Աշոտ Ալավերդյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝ մարտի 3-ից սկսած՝ տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հոկտեմբերի 16-20-ը Հայաստանն առանձին տաղավարով մասնակցում է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին:

Հայաստանի ազգային գրադարանի հետ գործակցությամբ իրականացվող ծրագիրը միտված է հայ գրականության հանրահռչակմանը մեր երկրի սահմաններից դուրս:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
Լոռի	+ 3 + 7 +12 + 16
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Երեւան	+15 + 18 + 22 + 24

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*